| 1210000 | **.2 Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր կառավարման տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ** | x | 30,0 | | 30,0 | 30,0 | 30,0 | 30,0 | 30,0 |
| 1216000 | Պարտադիր վճարներ | 482300 | 30.0 | | 30.0 | 30.0 | 30.0 | 30.0 | 30.0 |
| 1200000 | *Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ* | x | | | | | | | |
| 1215000 | Վարչական սարքավորումներ | 512200 | | | | | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | x | 45035,6 | | 45065,6 | 13478,3 | 22546,6 | 34218,5 | 45065,6 |

<<10>> դեկտեմբեր 2024թ.

տնօրեն Ա. Նազարյան

հաշվապահ Լ. Հակոբյան

hu/ 12

Հավելված N1
«Բյուջետային հիմնարկների պահպանման
ծախսերի նախահաշվի ձևը»
Օրինակելի ձև N1
հաստատվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի 23 հուլիսի 2007 թվականի
N 597-Ն հրամանով

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Նախահաշիվը՝32947հազ դր (Երեսուներկու միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար ) ՀՀ դրամ գումարով: Փոփոխված տարբերակ
( ընդամենը գումարը թվերով և տառերով)

Նարեկ Ռուբիկի Հարությունյան

(ՀՀ պետական կառավարման մարմնի ղեկավարի /համայնքի ղեկավարի/ ստորագրությունը և Ա.Հ.Ա.)

Կ.Տ.

**«10» «դեկտեմբերի » 2024թ.**

ՆԱԽԱՀԱՇԻՎ 02

Բ Յ ՈՒ Ջ Ե Տ Ա Յ Ի Ն   Հ Ի Մ Ն Ա Ր Կ Ի   Պ Ա Հ Պ Ա Ն Մ Ա Ն   Ծ Ա Խ Ս Ե Ր Ի

**«01»«հունվարի»2024թ-«31»«դեկտեմբերի»2024թ**

1. Հիմնարկի անվանումը՝<< **Աղավնաձոր գյուղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ**
2. Փոստային հասցեն **գ.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների,9**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման | 207 | 005 |
4. ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանումը **Կոտայքի մարզպետարան**
5. Հիմնարկը սպասարկող տեղական գանձապետական բաժնի (ՏԳԲ) անվանումը **Հրազդանի ՏԳԲ**
6. Հիմնարկի՝ տեղական գանձապետական բաժնում (ՏԳԲ) հաշվառման համարը | 900122002224 |
7. Ֆինանսավորման աղբյուրի կոդը (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2) | 2 |

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգ.
ծածկագիր | 9 | 1 | 1 |
9. Ծրագրի անվանումը՝
10. Ծրագրի կոդը | 51 |
11.ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կոդն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչակ. դասակարգման | 2 | 07 | 005 |
12. Չափի միավորը՝ հազար դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Նույն ժամանակահատվածի համար նախկինում հաստատված՝ գործող | | Նույն նախահաշվով հաստատվող ցուցանիշները | այդ թվում՝ ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների)աճողական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | նախահաշվի ցուցանիշները | նախահաշվում կատարված փոփոխություն-ները (ավելացումը՝ (+/ նվազեցումը՝/-) | | I | II | III | IV |
| Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1100000 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, | x | 32947,0 | 0,0 | 32947,0 | 21677,0 | 27127,0 | 32947,0 | 32947,0 |
| 1110000 | [illegible] ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝ | x | 25200,0 | 0,0 | 25029,0 | 17000,0 | 21500,0 | 25029,0 | 25029,0 |
| 1110000 | 1,1 Աշխատանքի վարձատրություն | x | 25200,0 | 0,0 | 25029,0 | 17000,0 | 21500,0 | 25029,0 | 25029,0 |

| Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1111000 | -Աշխատողների աշխատավարձեր և | 411100 | 23000,0 | -171,0 | 22829,0 | 16000,0 | 20000,0 | 22829,0 | 22829,0 |
| 1112000 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և | 411200 | 2200,0 | 0,0 | 2200,0 | 1000,0 | 1500,0 | 2200,0 | 2200,0 |
| 1120000 | 2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | x | 7744,0 | 0,0 | 7889,0 | 4674,0 | 5624,0 | 7889,0 | 7889,0 |
| 1121000 | *2.1 Շարունակական ծախսեր* | | 1600,0 | 0,0 | 1600,0 | 950,0 | 1270,0 | 1600,0 | 1600,0 |
| 1121100 | -գործառնական և բանկային ծառայությունների | 421100 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1121200 | -էներգետիկ ծառայություններ | 421200 | 1500,0 | 0,0 | 1500,0 | 900,0 | 1200,0 | 1500,0 | 1500,0 |
| 1121300 | -Կոմունալ ծառայություններ | 421300 | 100,0 | 0,0 | 100,0 | 50,0 | 70,0 | 100,0 | 100,0 |
| 1121400 | -Կապի ծառայություններ | 421400 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1121500 | -Ապահովագրական ծախսեր | 421500 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1121600 | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 421600 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1121700 | -Արտագերատեսչական ծախսեր | 421700 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1122000 | *2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր* | x | 150,0 | 0,0 | 150,0 | 90,0 | 120,0 | 150,0 | 150,0 |
| 1122100 | -Ներքին գործուղումներ | 422100 | 150,0 | 0,0 | 150,0 | 90,0 | 120,0 | 150,0 | 150,0 |
| 1122200 | -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 422200 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1122300 | -Այլ տրանսպորտային ծախսեր | 422900 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1123000 | *2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք* | x | 534,0 | 0,0 | 679,0 | 484,0 | 484,0 | 679,0 | 679,0 |
| 1123100 | -Վարչական ծառայություններ | 423100 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1123200 | -Համակարգչային ծառայություններ | 423200 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1123300 | -Աշխատակազմի մասնագիտական զարգացման | 423300 | 150,0 | 0,0 | 150,0 | 100,0 | 100,0 | 150,0 | 150,0 |
| 1123400 | -Տեղակատվական ծառայություններ | 423400 | 114,0 | 0,0 | 114,0 | 114,0 | 114,0 | 114,0 | 114,0 |
| 1123500 | -Կառավարչական ծառայություններ | 423500 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1123600 | - Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ | 423600 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1123700 | -Ներկայացուցչական ծախսեր | 423700 | 70,0 | 0,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 |
| 1123800 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 423900 | 200,0 | 145,0 | 345,0 | 200,0 | 200,0 | 345,0 | 345,0 |
| 1124000 | *2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք* | x | 90,0 | 0,0 | 90,0 | 90,0 | 90,0 | 90,0 | 90,0 |
| 1124100 | -Մասնագիտական ծառայություններ | 424100 | 90,0 | 0,0 | 90,0 | 50,0 | 70,0 | 90,0 | 90,0 |
| 1125000 | *2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)* | x | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1125100 | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 425100 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1125200 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 425200 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1126000 | *2.6 Նյութեր* | x | 5370,0 | 0,0 | 5370,0 | 3060,0 | 3660,0 | 5370,0 | 5370,0 |
| 1126100 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 426100 | 600,0 | 0,0 | 600,0 | 300,0 | 400,0 | 600,0 | 600,0 |
| 1126400 | -Տրանսպորտային նյութեր | 426400 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1126500 | -Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր | 426500 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1126600 | -Առողջապահական և լաբորատոր նյութեր | 426600 | 20,0 | | 20,0 | 10,0 | 10,0 | 20,0 | 20,0 |
| 1126700 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 426700 | 4500,0 | 0,0 | 4500,0 | 2500,0 | 3000,0 | 4500,0 | 4500,0 |
| 1126800 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 426900 | 250,0 | 0,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 |
| 1172000 | *7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՊԱԿՑՎԱԾ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ* | x | 3,0 | | 29,0 | 3,0 | 3,0 | 29,0 | 29,0 |
| 1172300 | -Պարտադիր վճարներ | 482300 | 3,0 | 26,0 | 29,0 | 3,0 | 3,0 | 29,0 | 29,0 |

| Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1210000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** | x | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1210000 | 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ | x | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1213000 | Շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1214000 | **ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ** | x | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1214100 | -Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1215000 | -Վարչական սարքավորումներ | 5122 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1216000 | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1000000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝** | x | 32947,0 | 0,0 | 32947,0 | 21677,0 | 27127,0 | 32947,0 | 32947,0 |

«10» «դեկտեմբերի » 2024 թ.

**Տնօրեն՝**

Կ Տ

(ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ)

(ստորագրություն)

(ստորագրություն)

**Գ. Մանուկյան**
(Ա.Հ.Ա.)

**Ա. Միքաելյան**
(Ա.Հ.Ա.)

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի
24 դեկտեմբերի 2007թ. Թիվ 900-Ն հրաման

1. Հիմնարկի անվանումը <<Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

3. Հիմնարկին սպասարկող բանկի անվանումը _ԱԿԲԱԲԱՆԿ ՓԲԸ
4. Գանձապետական բյուջետային հաշվի համարը _900122002224
5, Գանձապետական արտաբյուջետային հաշվի համարը ______________

| 9 | 1 | 1 | 51 | 207005 |
|---|---|---|---|---|

Ծրագրի անվանումը Նախադպրոցական կրթություն

| Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | տնտեսագիտական ծախսերի տնտ. | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2024թ.-ի պետական բյուջեից, ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I եռ. | | | II եռ. | | | III եռ. | | | IVեռ. | | | Ընդամենը |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| Աշխատավարձ և այլ վճարներ | 4111 | 16000,0 | 16000,0 | 16000,0 | 20000,0 | 20000,0 | 20000,0 | 22971,0 | 22971 | 22971,0 | 22829,0 | 22829,0 | 22829,0 | 22829,0 |
| Պարգևատրում | 4112 | 1000,0 | 1000,0 | 1000,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 | 2200,0 | 2200,0 | 2200,0 | 2200,0 | 2200,0 | 2200,0 | 2200,0 |
| Էներգետիկ ծառայություններ | 4212 | 900,0 | 900,0 | 900,0 | 1200,0 | 1200,0 | 1200,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 | 1500,0 |
| կոմունալ ծառայություններ | 4213 | 50,0 | 50,0 | 50,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 |
| Ներքին գործուղումներ | 4221 | 90,0 | 90,0 | 90,0 | 120,0 | 120,0 | 120,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 |
| Աշխատակազմի մասնագիտական զարգացման | 4233 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 | 150,0 |
| Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 70,0 |
| -Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն | 4239 | 100,0 | 100,0 | 100,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 345,0 | 345,0 | 345,0 | 345,0 |
| Մասնագիտական ծառայություններդ | 4241 | 50,0 | 50,0 | 50,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 90,0 | 90,0 | 90,0 | 90,0 | 90,0 | 90,0 | 90,0 |
| Գրասենյակային նյութեր | 4261 | 300,0 | 300,0 | 300,0 | 400,0 | 400,0 | 400,0 | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 |
| Առողջապահական նյութեր | 4266 | 10,0 | 10,0 | 10,0 | 10,0 | 10,0 | 10,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20,0 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 2500,0 | 2500,0 | 2500,0 | 3000,0 | 3000,0 | 3000,0 | 4500,0 | 4500,0 | 4500,0 | 4500,0 | 4500,0 | 4500,0 | 4500,0 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 |
| Պարտադիր վճարներ | 4823 | 3,0 | 3,0 | 3,0 | 3,0 | 3,0 | 3,0 | 29,0 | 29,0 | 29,0 | 29,0 | 29,0 | 29,0 | 29,0 |
| Տեղեկատվական ծառայություն | 4234 | 9,5 | 9,5 | 9,5 | 9,5 | 9,5 | 9,5 | 114,0 | 114,0 | 114,0 | 114,0 | 114,0 | 114,0 | 114,0 |
| Այլ մեքենաներ, | 5129 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| Ընդամենը | | 21432,5 | 21432,5 | 21432,5 | 27002,5 | 27002,5 | 27002,5 | 32947,0 | 32947,0 | 32947,0 | 32947,0 | 32947,0 | 32947,0 | 32947,0 |

Հիմնարկի

Պատասխանատու ստորաբաժանման
ղեկավարի ստորագրությունը
Գլխավոր հաշվապահի

ստորագրությունը ________________________________

Կ.Տ.

«10» «դեկտեմբերի » 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 1049

*12 դեկտեմբեր 2024թ.*

## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 06-Ի ԹԻՎ 603 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 06-ի «Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 603 որոշման հավելված 10-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 10 ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

1048

Հավելված 10
ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր
համայնքի ղեկավարի 2022 թվականի
հուլիսի 06-ի թիվ 603 որոշման
փոփոխությունները՝ 2024 թվականի
դեկտեմբերի 12-ի N 1248 որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

ա. ՀՀ կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական քարտուղարության անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ- բարեկարգության հարցերով կազմակերպիչ՝ ծածկագիր՝ 2.3-5

բ. Բաժնի գլխավոր մասնագետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին: Գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

ա. Բաժնի Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետներից մեկը կամ աշխատակազմի այլ գլխավոր մասնագետ՝ բաժնի պետի հայեցողությամբ:

բ. Օրենքով նախատեսված դեպքերում Բաժնի գլխավոր մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

գ. Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի առաջատար մասնագետներից կամ աշխատակազմի գլխավոր մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ բաժնի պետի հայեցողությամբ:

1.4. Աշխատավայրը

Գլխավոր մասնագետի հիմնական գործունեության վայրն է Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմը:

## 2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի պետին.

գ) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

զ) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

է) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.

ը) մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.

թ) վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն.

ժ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

ժա) մասնակցում է համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում կատարվող փոփոխությունների կազմման աշխատանքներին.

ժբ) վարում է համայնքային ծառայողների վերաբերյալ գրանցամատյանը և փոփոխությունների դեպքում դրանք սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում համապատասխան մարմիններ.

ժգ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

ժդ) Բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

*ժե) մասնակցում է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված գործառույթների իրականացման աշխատանքներին պարտավոր է իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատմաբ զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին.*

*ժզ) պարտավոր է տրամադրել համապատասխան մարմնի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն , պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ.*

*ժէ) իրավունք ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջելու և ստանալու տեղեկատվություն.*

*ժը) իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մամնից պահանջելու և ստանալու մեթոդական աջակցություն,խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային մջազգային պատավորությունների վերաբերյալ*

ժթ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## 3. Կազմակերպական շրջանակը

**3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը.**
Բաժնի գլխավոր մասնագետը՝

Ա. Բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

Բ. օժանդակում է քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի աշխատանքների ծրագրմանը, իսկ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը.

Գ. կատարում է բաժնի պետի հանձնարարականները,

Դ. պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

**3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**
Բաժնի առաջատար մասնագետը իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը.

**3.3. Շփումները և ներկայացուցչությունը.**
առաջատար մասնագետը՝

ա) Բաժնի ներսում և աշխատակազմում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.

բ) առանձին դեպքերում իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում և բաժնի պետի հանձնարարությամբ՝ տվյալ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ.

**3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**
Բաժնի պետի հանձնարարությամբ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է բարդ խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

## 4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

**4.1. Կրթություն, որակավորման աստիճանը**
Գլխավոր մասնագետը ունի բարձրագույն կրթություն,

**4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները**

ա. ունի ՀՀ Սահմանադրության, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, Վարչական իրավախախտումներ վերաբերյալ օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Արխիվային գործի մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

բ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

գ. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն :

**4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Գլխավոր մասնագետը ունի համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

**5. Համայնքային ծառայության դասային աստիճանը**

5.1 Բաժնի գլխավոր մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 1050

*13 դեկտեմբեր 2024թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N143-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կոմիտաս Արևշատի Հայրապետյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2024 թվականի նոյեմբերի 22-ին,ՀՀ, Կոտայքի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Սեդա Ավետիքի Բաղդոյանի կողմից, գրանցված գրանցամատյանում N 4622 ժառանգական գործ N 344), 0.0677 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 3-րդ փողոց, 6-րդ նրբանցք, 3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 1051

*13 դեկտեմբեր 2024թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Ծաղկահովիտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել 2024 թվականի դեկտեմբերի 01-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուրի փողոց, թիվ 25 հասցեում՝ 6 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 1052

*16 դեկտեմբեր 2024թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի 1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022HYPXNL և հիմք ընդունելով Արսեն Ալբերտի Սողոմոնյանի դիմումը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնք, Խ. Կեչառեցու փողոց 48 հասցեում գտնվող, Արսեն Ալբերտի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփ. վկայականի համար՝ 23032012-07-0132) 0,0572 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 196,36 ) քառ.մ. ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 629 530 ( վեց հարյուր քսանինը հազար հինգ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125003484 հաշվեհամարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 1053

*16 դեկտեմբեր 2024թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի 1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023HVQ5RF և հիմք ընդունելով Արման Բորիսի Հովսեփյանի դիմումը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնք, Նոր թաղամասի 3-րդ փողոց 16 հասցեում գտնվող, Արման Բորիսի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփ. վկայականի համար՝ 05092023-07-0043) 0,06 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 225,14 քառ.մ. ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և 15,58 քառ. մ. արտաքին մակերեսով պարիսպը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 655 962 ( վեց հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125003484 հաշվեհամարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**